

«Պոռտուկի» մէջ՝ նուաճն ու թուզ (135, '7): Եւ որ եւ է «կաշեայ աման» կը գործածուէր շագանակի պահպանութեան (136): — Սոյն անօթոց ձեւերը պիտի տեսնենք յաջորդ գլխոյն մէջ, որով այս տեղ աւելորդ է կանգ առնուլ:



Բ. ՄԱՌԱՆ

1. — Վայրը: — Զատ էր նախորդէն՝ գինեոյ պահպանութեան տեղին, որուն յատուկ էր մառան կոչումը, ինչպէս յայտնի է Փաւստոսի օրինակէն՝ «գմառան գինեոյն» (108): Ոսկերերան ըսելով՝ որ անապատականաց քով չկային «ոչ շտեմարանք և մառանք» (Թղթ. Ա. 127), նոյնպէս կ'որոշէ զասոնք իրարմէ: Եւ Վաստակոց գրոց մէջ «մառանը» գինեոյ պահարան է միշտ (87, 91 եւն), եւ շինելի «ի միջաշաւիղ տեղ ի ջեր եւ ի ցուրտ», եւ «ի բարձր տեղ» (87): Փաւստոսի յոգնակի ձեւէն միանգամայն յայտնի է՝ որ բազում այգիներու տեարք մէկ մառանէ աւելի ունէին:

2. — Գիւնիք: — Սովորաբար բաւական գաղափար չունինք հին հայ մառանաց հարստութեան մասին, որ արդարեւ մեր